# ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՄԱՐՏ 2026

Աշխատանքային իրավունքների պաշտպանության իրազեկման արշավ Արտաշատում

Հայաստանի արհմիություններ կոնֆեդերացիայի խորհրդ անդամները հանդիպել են Արսե Թորոսյանի հետ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ողջույնի խոսք
- Աշխատանքային իրավունքների պաշտպանության իրազեկման արշավ Արտաշատում
- Կին արհմիութենականների դերի արժևորմանը նվիրված միջոցառում Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ
- Քննարկում Կանանց ու աղջիկների նկատմամբ խտրականության դեմ պայքարի վերաբերյալ
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի անդամները հանդիպել են Արսեն Թորոսյանի հետ



# ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:

Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՇԱՎ ԱՐՏԱՇԱՏՈՒՄ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան (ՀԱՄԿ) շարունակում է աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ իրազեկման արշավը: Այս անգամ ՀԱՄԿ-ի ներկայացուցիչներն այցելել էին Արտաշատ, որտեղ արհմիութենականների հետ քննարկվել են աշխատանքային իրավունքների պաշտպանության գործնական մեխանիզմները:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված հիմնական իրավունքները, աշխատանքային պայմանագրերին, աշխատաժամանակին, արձակուրդներին, աշխատավարձին, աշխատանքի անվտանգությանը և աշխատանքային վեճերի կարգավորմանը վերաբերող հարցեր:

Մասնակիցները բարձրացրել են իրենց հուզող խնդիրները և ստացել մասնագիտական խորհրդատվություն:

ՀԱՄԿ ներկայացուցիչները կարևորել են արհմիությունների դերը աշխատողների իրավունքների պաշտպանության և սոցիալական երկխոսության զարգացման գործում:

ՀԱՄԿ-ը շարունակելու է նման նախաձեռնությունները՝ նպաստելով աշխատողների իրավագիտակցության բարձրացմանը:

https://www.facebook.com/reel/810542118755024

## Կին արհմիութենականների դերի արժևորմանը նվիրված միջոցառում
## Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ

Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ Շինարարության և շինանյութերի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը կազմակերպել էր տոնական միջոցառում՝ նվիրված ոլորտի կին արհմիութենականներին:

Միջոցառմանը մասնակցում էին ճյուղային հանրապետական միությանն անդամակցող արհեստակցական կազմակերպությունների կին անդամներն ու ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքում ընդգծվեց կանանց կարևոր դերը ոլորտի զարգացման, աշխատողների իրավունքների պաշտպանության և արհմիութենական շարժման ամրապնդման գործում:

ՀԱՄԿ-ի նախագահը և Ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչները շնորհավորեցին ներկաներին Կանանց միջազգային օրվա առթիվ՝ նշելով, որ կանանց ակտիվ ներգրավվածությունը նպաստում է հավասար հնարավորությունների, արժանապատիվ աշխատանքի և սոցիալական արդարության սկզբունքների առաջմղմանը: Նրանք բարձր գնահատեցին ոլորտում աշխատող կանանց մասնագիտական ու հասարակական գործունեությունը, ինչպես նաև նրանց ներդրումն արհմիութենական կառույցների զարգացման գործում:

Միջոցառման ավարտին Շինարարության և շինանյութերի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից կազմակերպվեց մրցանակաբաշխություն, որի ընթացքում արհմիութենական գործունեության, երկարամյա և բարեխիղճ աշխատանքի համար մի շարք կին արհմիութենականներ արժանացան պատվոգրերի և խրախուսանքների:

Միջոցառումն անցավ ջերմ և տոնական մթնոլորտում՝ ևս մեկ անգամ ընդգծելով կանանց նշանակալի ներդրումը ոլորտի և արհմիութենական շարժման զարգացման գործում:

# ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարտի 18-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ կայացավ մոնիտորինգային այցով Հայաստանում գտնվող Կանանց ու աղջիկների նկատմամբ խտրականության դեմ պայքարի հարցերով ՄԱԿ աշխատանքային խմբի անդամների, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչների աշխատանքային հանդիպում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԱՄԿ թիվ 190 Կոնվենցիայի վավերացման հետ կապված հետագա գործողությունները, խնդիրները և ռազմավարությունները:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը ներկայացրեց արհմիությունների կողմից իրականացված աշխատանքները կոնվենցիայի վավերացման, ինչպես նաև առկա օրենսդրական բացերը, խնդիրները և խոչընդոտները:

Հանդիպման մասնակիցները փաստեցին, որ համագործակցությունը և ջանքերի մեկտեղումը անհրաժեշտ է Կոնվենցիայի լիարժեք կիրառման, խտրականություններից և ոտնձգություններից զերծ՝ կայուն և անվտանգ աշխատանքային միջավայր ունենալու համար:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) խորհրդի անդամները հանդիպում են ունեցել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի հետ՝ բարձրացնելու և քննարկելու աշխատողների իրավունքների պաշտպանությանն առնչվող առաջնահերթ հարցերը։

Հանդիպման ընթացքում ՀԱՄԿ ներկայացուցիչները ներկայացրել են աշխատանքի ոլորտում առկա հիմնախնդիրները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով աշխատողների իրավունքների խախտումների դեպքերին, աշխատանքի անվտանգության անբավարար պայմաններին, ինչպես նաև կոլեկտիվ պայմանագրերի կիրառման սահմանափակ պրակտիկային։ Ընդգծվել է, որ աշխատողների շահերի արդյունավետ պաշտպանությունը հնարավոր է միայն ուժեղ և անկախ արհմիությունների գործուն մասնակցության պայմաններում։

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի անդամները կարևորել են սոցիալական երկխոսության ինստիտուտի զարգացումը և նշել, որ պետություն–արհմիություն–գործատու եռակողմ համագործակցությունը պետք է ունենա գործնական և ոչ ձևական բնույթ։ Նշվել է նաև, որ անհրաժեշտ է ապահովել արհմիությունների լիարժեք ներգրավվածությունը աշխատանքի և սոցիալական քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացներում։

ՀԱՄԿ ներկայացուցիչները բարձրացրել են նաև աշխատանքի օրենսդրության կիրառման խնդիրները՝ շեշտելով վերահսկողական մեխանիզմների ուժեղացման, աշխատողների իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիքների ներդրման և աշխատանքի տեսչական համակարգի դերակատարության բարձրացման անհրաժեշտությունը։

Իր հերթին, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը ներկայացրել է ոլորտում իրականացվող բարեփոխումները և նախարարության մոտեցումները՝ ուղղված սոցիալական պաշտպանության համակարգի զարգացմանը և զբաղվածության խթանմանը։ Նա ընդգծել է արհմիությունների հետ համագործակցության կարևորությունը և պատրաստակամություն հայտնել շարունակելու կառուցողական երկխոսությունը։

Հանդիպման ավարտին կողմերը վերահաստատել են համագործակցության խորացման պատրաստակամությունը՝ կարևորելով աշխատողների իրավունքների պաշտպանության ամրապնդումը, արժանապատիվ աշխատանքի պայմանների ապահովումը և սոցիալական արդարության խթանումը։

https://hamk.am/hayastani-arhmiutyunneri-konfederatsiayi-khorhrdi-andamnery-handipel-en-arsen-torosyani-het

https://www.facebook.com/pagehamk/posts/pfbid033jgTsVrHV6Y3kmTJFoAkwegQ6jFqWvc8h2PeidAgJKyFv44o5CxfGHN9XBz9WQvFl

**Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա**
**Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ**
**Հեռ. ՝ +37410 583682**
**www.hamk.am**
**hamk@hamk.am**